

Թիւ 27423
Օգոստոս 10, 1981

Արժանաշնորհ
Տ. Յուսիկ Բհնյ. Նշանեան
Առժամեայ Հովիւ Ս. Խաջ Եկեղեցւոյ
Թորոնթօ.


Սիրելի Տէր Յուսիկ,

Համայնքիդ տարեստուրքերու կապակցութեամբ մենք խօսած ենք ձեր փաստաբաններուն հետ: Առաջնորդարանի փաստաբանին թելադրութիւնն է որ ծխական խորհուրդիդ փոխգիրը գրուի Diocese of the Armenian Church անունին, եւ անոր ներքեւը աւելցուի To Ad Hoc Committee of Canada.

Համայնքիդ յետնեալ տարեստուրքերն են. 1980 տարուան համար 4,560.00 զանատական տոլար, եւ 1981 տարուան համար ---Յուսուարէն Յուլիս--- 8,764.00 զանատական տոլար:

Կը սպասենք ձեր փաստաբանին կողմէ պատրաստուած եւ ծխական խորհուրդիդ կողմէ ստորագրուած նամակի օրինակին՝ ուղղուած Օթթաուայի գրասենեակին, ինչպէս նաեւ ձեր փաստաբանի այն նամակին՝ ուր յստակ կերպով արձանագրուած ըլլայ որ Առաջնորդարանին եղած տարեստուրքերու վճարումը հակաօրինական չէ:

Ձեզի եւ ծխական խորհուրդիդ անդամներուն կը մաղթենք քաջաողջութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

Թորոնթոյ Արքեպիսկոպոս
Առաջնորդ

Օրինակ՝ ծխական խորհուրդի Ատենապետին